

**«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ
ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, ՎԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ
ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ,
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ
ՆԱԽԱԳԾԵՐ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

**ՎԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1 «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2018 թվականի մարտի 23-ի ՀՕ-207-Ն օրենքի 10-րդ հոդվածի 13-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«13. Վրդետական մարմնի ղեկավարի հայեցողությամբ իր բացակայության դեպքում նրան փոխարինում է տեղակալը, ինչի մասին նշում է կատարվում բացակայության հիմքը սահմանելու մասին իրավական ակտում:

Պետական կառավարման մարմնի ղեկավարի լիազորությունների կատարման անհնարինության, ինչպես նաև հրաժարականի հիմքով ազատման դեպքում մինչև նոր ղեկավարի նշանակումը նրան վարչապետի որոշմամբ փոխարինում է տեղակալը:»:

Հոդված 2. Օրենքի 16-րդ հոդվածի 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Ենթակա պետական մարմնի ղեկավարի հայեցողությամբ իր բացակայության դեպքում նրան փոխարինում է տեղակալը, ինչի մասին նշում է կատարվում բացակայության հիմքը սահմանելու մասին իրավական ակտում:

Ենթակա պետական մարմնի ղեկավարի լիազորությունների կատարման անհնարինության, ինչպես նաև հրաժարականի հիմքով ազատման դեպքում մինչև նոր ղեկավարի նշանակումը նրան վարչապետի որոշմամբ փոխարինում է տեղակալը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ Օ Ր Ե Ն Բ Ը

«ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-157-Ն օրենքի 1-ին հավելվածում

1) հանել լիախարարի առաջին տեղակալ 10.00, լիազգային անվտանգության ծառայության տնօրենի առաջին տեղակալ 10.00, Ոստիկանության պետի առաջին տեղակալ 10.00, Պետական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ 10.00, « ԶՈՒ գլխավոր շտաբի պետի առաջին տեղակալ 10.00», չէլ ԱՆ Քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալ 8.50, Կառավարությանն ենթակա մարմնի ղեկավարի առաջին տեղակալ 8.00 տողերը.

2) լիախարարություններ բաժնից հանել լիախարարի առաջին տեղակալի օգնական 4.50 տողը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆԲԸ

<<ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ>> ՕՐԵՆՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Քրեակատարողական ծառայության մասին՝ Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ընթացքում ներառվելու լուծվող գործեր:

Հոդված 2. Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ընթացքում ներառվելու քրեակատարողական ծառայության պետի առաջին տեղակալի, բաժնի:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: